Յունաց փոխեցաւ 'ի տրտմութիւն։ Եւ յելանել նոր դատաւորին 'ի Յոպպէ՝ պատմեալ էր թէ խափանեցաւ հրովարտակն Յունաց և աքսորեցաւ Պատրիարքն և բանտարկեցան անձինք երեւելիք 8 յաղէ նոցին։ Իսկ 'ի վերջ կոյս Յունիս ամսոյ՝ զայրացեալ միաբանացն Յունաց ընդ յապաղումն գործոյն, և 'ի պատ 'ի պատ բանս այլազգեաց՝ և գրգռեալ զխուժանն առհասարակ՝ յարուցին աղմուկ մեծ, որք և աղաղակէին դնել զինչս և զտացուածս և զկեանս իսկ զլխովին, կամ խսպառ ջնջիլ 'ի քաղաքէն և կամ նորոգել զտաճարն։ Եւ ինքեանք առանց խնայելոյ սկսան յաճախել 'ի տուրս, որով ձգեցին 'ի կողմն իւրեանց զմեծ մասն այլազգեաց. և իջեալ 'ի դատարան ետուն ընթեռնուլ զհրովարտակն, յորում հրամայէր Արքայ Յունաց չինել զբովանդակ տաճարն, եւ մի ումեք այլոց ազգաց լինել ձեռնամուխ յայն գործ, և յետ այնորիկ շնորհիւ Յունաց՝ ստանալ Հայոց և Լատինաց մէն մի պատարագամատոյց սեղանս։ Եւ ապա մատուցին զայլ հրովարտակ (Խաթթի Շէրիֆ) յորում հրամայէր Արքայ դրաւել Յունաց զբովանդակ Ս. Տեղիս, և զվանօրայս Հայոց՝ զՍուրբ Յակոբ, այլովքն հանդերձ. զօրութիւնք հրովարտակաց, առատութիւն դանձուց զօրացոյց զկամս դատաւորաց, և Յոյնք 'ի խորհուրդ մտին ընդ նոսա, թէ յո՞ր խնդիր արժան իցէ նախ ձեռնարկել, արտաքսել զՀայս և գրաւել զվանօրայս նոցա՝ թէ 'ի չինութիւն տաճարին, այլ քաջ խորհուրդ այլազգեաց պատրուակ էարկ 'ի միտս Յունաց. նախ ձեռն արկանել 'ի չինութիւն տաճարին, առ 'ի նուաճել զլատինս, որ հզօրագոյն են քան զինքեանս, և ապա դիւրին է նկուն առնել զՀայս. իսկ ոմանք որ 'ի կողմն Յունաց էին՝ ստիպէին խուռն բազմութեամբ երթալ 'ի տաճարն և քննել զտեղիս իւրաքանչիւրոց՝ և տալ հրաման չինութեան Յունաց։ Սակայն Հայք և Լատինք՝ նախ քան զվրդովիլ Յունաց՝ ձգեալ էին 'ի կողմն իւրեանց զոմանս յերեւելեացն այլազգեաց, եւ մտերմացեալ ընդ նոսա. Սոքա բանս եդին յականջս ռամկին եւ գրգռեալ զնոսա յարուցին աղմուկ մեծ, որք էին իբրեւ անձինք 1000, և դիմեալ առ դատաւորն աղաղակէին, եթէ ոչ միասցին երեք ազգք 'ի մի կամս և 'ի մի խորհուրդ՝ չէ